«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 29.12.2017թ. թիվ 1105 Լ/Կ հրամանի

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընդունված է Համալսարանի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 28.12.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան) հետևողականորեն աշխատանքներ է իրականացնում կրթական ծրագրերի կատարելագործման, կրթության որակի ապահովման և բարելավման ուղղություններով:

Կրթական վերջնարդյունքների ապահվման տեսանկյունից հատկապես կարևորվում են կրթական ծրագրերի մատչելիությունը, ըմբռնելիությունը և գրավչությունը ուսանողների համար, համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, ընդունելիությունը հասարակության կողմից, թափանցիկ կառուցվածքը և համադրելիությունը այլ ՄՈՒՀ-երի ծրագրերի հետ՝ որոնք նախադրյալներ են Համալսարանի կրթական արդյունքների որակի ապահովման, ճանաչման և ուսանողների ու դասախոսների շարժունության համար:

2. Կրթական ծրագրերի աուդիտի սույն ընթացակարգը սահմանված է Համալսարանի ՈԱԿ-ի աուդիտի կանոնակարգին համապատասխան:

3. Աուդիտի գործընթացի հիմքում դրված են ՄԿԾ-ի որակի ապահովման չափանիշները:

4. Ընթացակարգում գործածվում են հետևյալ հապավումները.

ՄԿԾ- մասնագիտական կրթական ծրագիր,

ԿԾ – կրթական ծրագիր,

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ,

ՈԱ- որակի ապահովում,

ՈԱԿ- որակի ապահովման կենտրոն,

ECTS – European Credit Transfer and Accumulation System/Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգ/:

II. ՄԿԾ-Ի ԱՈՒԴԻՏԻ ՆՊԱՏԱԿԸ

5. ՄԿԾ-ի կառուցվածքի ուսումնասիրություն՝ ԿԾ-երի կազմման Համալսարանի ռազմավարությանը և քաղաքականությանը համապատասխանության տեսանկյունից:

6. Ծրագրի համապատասխանության գնահատում ՀՀ ՈԱՇ-ին, բուհի առաքելությանը, նպատակներին և ծրագրի պոտենցիալ շահառուների պահանջների:

7. ԿԾ-ի իրականացման որակի ապահովման գործընթացների ուսումնասիրություն, գնահատում:

8. Շրջանավարտների որակավորման և մասնագիտական պատրաստվածության մակարդակից գործատուների բավարարվածության աստիճանի գնահատում:

9.Մասնագիտության ոլորտում ռիսկերի, սպառնալիքների բացահայտման և հաշվառման մեխանիզմների, կիրառվող գործիքների ուսումնասիրություն և գնահատում:

III. ՄԿԾ-Ի ԱՈՒԴԻՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.Դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդների, տեխնոլոգիաների նպատակահարմարության և արդյունավետության ուսումնասիրություն՝ կրթական վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից:

11. ԿԾ-ի իրականացման գործընթացում ուսանողակենտրոն դասավանդման և ուսումնառության համակարգի ներդրման մեխանիզմների ուսումնասիրություն և վիճակի գնահատում:

12. ԿԾ-ի իրականացման և կրթական վերջնարդյունքների ապահովման գործընթացներում հետադարձ կապի և այլ գործոնների հաշվառման ու ազդեցության գնահատում:

13. ԿԾ-ի մշտադիտարկման, վերանայման և բարելավման մեխանիզմների ուսումնասիրություն և կիրառվող գործիքների արդյունավետության գնահատում:

14.ԿԾ-ի իրականացման համագործակցային դաշտում (տեղական և միջազգային) կողմերի մասնակցության աստիճանի բացահայտում՝ առաջավոր փորձի փոխանակման նպատակով:

15. ԿԾ-ի իրականացման և որակի ապահովման հնարավոր ռիսկերի բացահայտում և հաշվառում:

16. ԿԾ-ի աշխատակազմին՝ խորհրդատվությունների և առաջարկությունների տրամադրում, կրթական գործընթացների իրականացման, կրթական վերջնարդյունքների ձևավորման, որակի ապահովման վերաբերյալ:

IV. ԱՈՒԴԻՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման աշխատանքների հիմքում ընկած է ՄԿԾ-երի մշակման Համալսարանում ընդունված ռազմավարությունը և քաղաքականությունը, որը նախատեսում է.

17. ՄԿԾ-ի պլանավորման, մշակման և իրականացման մոնիթորինգի փաստաթղթերի պատրաստում,

18. ՄԿԾ-ով մասնագետների պատրաստման անհրաժեշտության հիմնավորում,

19. կրթական ծրագրի կազմում՝ Թյունինգ-մեթոդաբանությանը համապատասխան, ըստ հետևյալ սխեմայի.

- ծրագրի ուղղվածությունը (նպատակը, խնդիրները) և նկարագրությունը,
- ծրագրի վերջնական արդյունքները՝ ընդհանուր և բուն մասնագիտական կոմպետենցիաների տեսքով,

- բակալավրերի և մագիստրանտների միջանկյալ և վերջնական ձեռքբերումների գնահատման մեթոդները,

- որակի ապահովման և վերահսկման մեխանիզմները:

20. ԿԾ-ի մշակման ընթացքի և յուրաքանչյուր փուլի արդյունքների քննարկում՝ համապատասխան ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդների, Համալսարանի գիտական խորհրդի նիստերին,

21. ուսումնամեթոդական փաթեթի մշակում՝ ներառյալ ECTS կրեդիտային համակարգի հիման վրա կազմված ուսումնական պլանները՝ բոլոր դասընթացների/մոդուլների համար վերջնական արդյունքների/կոմպետենցիաների հստակ շարադրմամբ,

22. մշակված ԿԾ-ի և ուսումնամեթոդական փաթեթների ներքին և արտաքին փորձաքննություն:

23. ՄԿԾ-ի մշակման գործում որակի ապահովման համակարգի ներդրում Թյունինգ-մեթոդաբանությամբ,

24. ԿԾ-ի մշակման և որակի ապահովման գործընթացներում շահակից կողմերի ներգրավում,

25. Բուհի դասախոսների համար կլոր սեղանների, խորհրդատվությունների, սեմինարների անցկացում՝ նորարարական մոտեցումների, մեթոդների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով,

26. ՄԿԾ-ում նորարարական տեխնոլոգիաների մշակում և ներդրում,

27. մագիստրատուրայի, բակալավրիատի ուսանողների և շրջանավարտների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման գործընթացներում,

28. անհրաժեշտ ռեսուրսների նկարագրություն (դասախոսական կազմ, ենթակառուցվածքներ, տեղեկատվական ռեսուրսների որակ և քանակ, նյութատեխնիկական բազա),

29. մասնագիտությանը համապատասխանող ընդհանուր, միջանձնային, համակարգային և առարկայական կոմպետենցիաների մշակում,

30. ուսանողների գիտելիքների գնահատման ձևերի մշակում և ներդրում,

31. դասընթացների առանձին մոդուլների վերջնարդյունքների գնահատման շեմային չափանիշների մշակում՝ արտահայտված կրեդիտային միավորներով,

32. դասընթացային առանձին մոդուլներից ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների գնահատման արդյունավետ մոդելների կիրառում,

33. ՄԿԾ-ի մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման ընթացակարգերի որոշում և կիրառում:

V. ՄԿԾ-Ի ԱՈՒԴԻՏԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

34. ՈԱԿ-ի ղեկավարը հանդիսանում է գործընթացի նախապատրաստման, մշակման, կազմակերպման և ներդրման պատասխանատու:

35. Աուդիտի խումբը ձևավորվում է և համալրվում Համալսարանի ՈԱԿ-ի կողմից՝ մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատակիցներով, ուսանողներով և գործատուներով, որի կազմը հաստատվում է ռեկտորի կողմից:

36. Աուդիտի խմբի անդամներից պահանջվում են.

- բարձրագույն կրթություն, ներքին աուդիտի անցկացման նախապատրաստություն և աշխատանքային փորձ,
- ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջների իմացություն՝ ըստ ներքին աուդիտի սկզբունքների և մեթոդների,
- անձնական, հաղորդակցային շփումներ հաստատելու ունակություն, հավասարակշռվածություն, ինքնատիրապետման կարողություն,
- անաչառություն, վերլուծաբար և ճկուն մտածելու կարողություն, նպատակասլացություն, աշխատասիրություն,
- սեփական մտքերը բանավոր և գրավոր արտահայտելու կարողություն, տակտի զգացողություն:

37. ՈԱԿ-ի աուդիտի պատասխանատուներն իրականացնում են ՄԿԾ-ի աուդիտի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման աշխատանքները: ՈԱԿ-ի անձնակազմը նույնպես մասնակցում է աուդիտի գործընթացին:

38. Աուդիտի խումբը.

- մշակում է ՄԿԾ-ի աուդիտի փաթեթը, որն ընդգրկում է աուդիտի նպատակը, խնդիրները, չափանիշները և չափորոշիչները,
- ստուգում է և գնահատում նախորդ աուդիտի շտկողական գործողությունների կատարման ընթացքը (առկայության դեպքում),
- ՄԿԾ-ի ստորաբաժանումների հետ քննարկում է աուդիտի պլանը և որոշում ժամկետները,
- աուդիտի խմբի մասնակիցներին ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերով,
- տեղեկատվություն է հավաքագրում և ստուգում մասնագիտության ԿԾ-ի փաստաթղթավորումը,
- ստուգում է կրթական ծրագրի մշակման ընթացակարգի և կառուցվածքի համապատասխանությունը գործընթացի իրականացման ռազմավարությանը,
- ստուգում է կրթական գործընթացի համապատասխանությունը որակի ապահովման չափանիշներին, չափորոշիչներին և պահանջներին,

- հավաստում է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնների և դասախոսական կազմի մասնագիտական ու մեթոդական համապատասխանությունը:

39. Աուդիտի խմբի ղեկավարը համակարգում է աուդիտի աշխատանքները.

- Որոշում է աուդիտի խմբի անդամների պարտականությունները,
- Անցկացնում է խմբի ժողով, որի ընթացքում քննարկվում է աշխատանքային պլանը և ամփոփվում իրականացված աշխատանքները:
- նախապատրաստում է աուդիտի արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որը հետագայում ներառվում է «Աուդիտի հաշվետվության» մեջ,
- անցկացնում է եզրափակիչ խորհրդակցություն, որտեղ կրթական ծրագիրը կազմող և իրականացնող աշխատախմբին ու պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվում են աուդիտի տվյալները և արդյունքների մասին եզրակացությունը,
- պատրաստում է աուդիտի հաշվետվություն, որը աուդիտորական խմբի նիստով հաստատվելուց հետո ներկայացվում է համապատասխան մասնագիտական ամբիոնների, ֆակուլտետի և Համալսարանի ղեկավարությանը:

40. Աուդիտի հաշվետվությունը պարունակում է.

- աուդիտի նպատակը,
- աուդիտի ծավալը (աուդիտի շրջանակը և ժամկետները),
- աուդիտորական խմբի ղեկավարի և կազմի մասին տեղեկություններ,
- աուդիտի չափանիշները,
- աուդիտի չափորոշիչները,
- աուդիտի դիտարկումները,
- աուդիտի արդյունքների վերաբերյալ եզրակացություն,
- ՄԿԾ-ի բարելավմանը և որակի ապահովմանն ուղղված առաջարկություններ:

41. Աուդիտի անցկացումից հետո 2 շաբաթվա ընթացքում աուդիտի խմբի ղեկավարը հաշվետվություն է ներկայացնում է Համալսարանի ռեկտորին՝ հաստատման և պահպանման համար: Հաշվետվության կրկնօրինակներն ուղարկվում են ԿԾ-ը իրականացնող մասնագիտական ամբիոնների և ֆակուլտետի ղեկավարներին: Հաշվետվությունը ներառում է ամբողջական, ճշգրիտ և միանշանակ տեղեկատվություն աուդիտի անցկացման վերաբերյալ: Այն իրենից ներկայացնում է գործընթացի որակի ապահովմանը, գնահատմանը և բարելավմանը վերաբերվող ամբողջական փաստաթուղթ:

42. «Աուդիտի հաշվետվությունը» ստանալուց հետո ստորաբաժանումների ղեկավարները համապատասխան քայլեր են ձեռնարկում անհամապատասխանությունների շտկման և

վերացման ուղղությամբ, հաշվի առնելով գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

43. Աուդիտի վերաբերյալ հաշվետվությունները և այլ փաստաթղթերը պահպանվում են 3 տարվա ընթացքում, որից հետո փոխանցվում են պահոց (արխիվ):

44. Աուդիտորները իրենց գործունեության շրջանակներում պատասխանատվություն են կրում աուդիտի պլանավորման, տեղեկատվության հավաստիության և անաչառության համար:

45. Աուդիտորները պատասխանատվություն են կրում տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

VI. ՄԿԾ-Ի ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

46. ԿԾ-ի աուդիտի ծրագրով և պլանով նախատեսված փաստաթղթերի ստուգում (համարժեքության աուդիտ) Համալսարանի գործավարության, փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ընթացակարգի համապատասխանության տեսանկյունից հետևյալ ընթացակարգով.

- ԿԾ-ով նախատեսված և հղումներ արված փաստաթղթերի առկայություն,
- փաստաթղթերի կոմպլեկտավորում և ամբողջություն,
- փաստաթղթերի արտաքին տեսք՝ ձևավորման կանոններին համապատասխան,
- փաստաթղթերը կազմողների, ստուգողների, համաձայնեցնողների և հաստատողների ստորագրությունների, կոդավորման, պաշտոնների և ամսաթվերի առկայություն,
- հասկացությունների և ձևակերպումների ճշգրիտ և միանշանակ կիրառում,
- փաստաթղթաշրջանառության գործընթացի համապատասխանություն,
- հաջորդական գործողությունների փաստաթղթաշրջանառության շարունակականություն,
- Փաստաթղթաշրջանառության որակի ապահովման գործառույթների համար անհրաժեշտ պայմանների առկայություն:

47. Հարցումներ ԿԾ-ի շահակիցների շրջանում: Վերլուծության արդյունքներ:

48. Հարցումներ ԿԾ-ը սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների շրջանում: Վերլուծության արդյունքներ:

49. Աուդիտի ընթացքում բացահայտված անհամապատասխանություններ, որոնք գրանցվում են արձանագրություններում:

VII. ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

50. Որակի կենտրոնի ղեկավարը մշակում և Համալսարանի ռեկտորի հաստատման է ներկայացնում ներքին աուդիտի ծրագիրը:

50. Աուդիտը անց է կացվում աուդիտի կազմակերպման և իրականացման համար մշակված և հաստատված ծրագրին, պլանին և չափորոշիչներին համապատասխան:

51. Աուդիտի գործընթացի սկզբում աուդիտի խմբի ղեկավարն անցկացնում է ծանոթագրական նիստ՝ ներկայացնելով աուդիտի ծրագիրը և պլանը, որին մասնակցում են ԿԾ-ի ղեկավարը, ծրագիրն իրականացնող ստորաբաժանումների ներկայացուցիչներ և ԿԾ-ի աուդիտի խմբի անդամները:

52. Աուդիտի խմբի անդամները տեղեկատվություն են հավաքագրում աուդիտի ծրագրին, նպատակներին և խնդիրներին համապատասխան և անցկացնում բացահայտված անհամապատասխանությունների արձանագրության մեջ (հավելված):

53. Աուդիտի խմբի ղեկավարը հաշվետվություն է պատրաստում աուդիտի արդյունքների վերաբերյալ, օգտագործելով աուդիտի խմբի անդամների աշխատանքային նյութերը (այն է՝ ստուգման ցուցակներ, անհամապատասխանությունների արձանագրություններ, հաշվետվությանն առնչվող առաջարկություններ և այլն):

54. Աուդիտի ավարտից և հաշվետվության կազմումից հետո անցկացվում է աուդիտի խմբի ամփոփիչ նիստ, որի ժամանակ աուդիտի արդյունքները ներկայացվում են ԿԾ-ը իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին:

55. Որակի ապահովման պատասխանատուն (կենտրոնի ղեկավարը) կազմակերպում է աուդիտի արդյունքների քննարկում, հաստատում, հաշվետվության պահպանում և ներկայացնում պատասխանատու անձանց ու ստորաբաժանումներին՝ համաձայն համապատասխան ցուցակի:

56. Աուդիտի արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումների համաձայն՝ ՄԿԾ-ն իրականացնող ստորաբաժանման ղեկավարը.

- շտկում է անհամապատասխանությունները,
- ընթացք է տալիս զգուշացման գործողություններին,
- երաշխավորություն է տալիս աշխատանքների բարելավման վերաբերյալ:
- Իրականացված աշխատանքների արդյունքները փաստաթղթավորվում և ներկայացնում է որակի ապահովման կենտրոնին սահմանված ժամանակահատվածում:

Հավելված 1

ՄԿԾ-Ի ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ 1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Ծրագրի նպատակը հստակ ձևակերպված է և փաստաթղթավորված ՈԱՇ- ին, բուհի առաքելությանը, նպատակներին և ծրագրի պոտենցիալ շահառուների պահանջներին համապատասխան:

1.2 Մշակված են ծրագրի վերջնարդյունքների ապահովման և նպատակների վերանայման ու հստակեցման արդյունավետ մեխանիզմներ:

1.3. Ծրագրի նպատակները ընդունելի են ԿԾ-ը իրականացնողների կողմից, հրապարակված են և հասանելի շահագրգիռ բոլոր կողմերի համար:

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԾ-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ԿԾ-ում ձևակերպված և փաստաթղթավորված վերջնարդյունքները համապատասխանում են ծրագրի նպատակներին:

2.2. ԿԾ-ը համապատասխանում է ուսանողների և գործատուների պահանջներին և ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են նրանց կարիքները:

2.3. ԿԾ-ը համահունչ է այլ բուհերի համանուն կրթական ծրագրերի հետ, որը որոշվել է բենչմարկինգի արդյունքում և նպաստում է ուսանողների ու դասախոսների շարժունությանը և մասնագիտության միջազգայնացմանը:

2.4. Բակալավրիատի Կրթական ծրագիրը պարունակում է 240 ECTS կրեդիտ:

2.5. Ուսումնական պլանը և առարկայական մոդուլները համապատասխանում են ԿԾ-ի նպատակներին և ապահովում են կրթական վերջնարդյունքները:

2.6. ԿԾ-ով ուսումնառողների առարկայական նախապատրաստվածությունը բավարար է ծրագրի յուրացման համար:

- ✓ ԿԾ-ի առարկայախմբերը հնարավորություն են ստեղծում դասընթացների խորացված ուսումնասիրության համար:
- ✓ ԿԾ-ի ընդհանուր առարկայախմբի մոդուլները նպաստում են ընդհանրական, միջանձնային կոմպետենցիաների ձևավորմանը և հիմք են հանդիսանում մասնագիտական առարկայախմբի յուրացման համար:
- ✓ Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաների գծով նախապատրաստությունը հնարավորություն է ընձեռնում՝ յուրացնելու ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական առարկայախմբի առարկաները:

2.7. Ընդհանուր և հատուկ մասնագիտական առարկայախումբը համապատասխանում է և բավարար է ԿԾ-ով նախատեսված մասնագիտական գործունեության յուրացման,

կազմակերպչական ունակությունների և կառավարչական հմտությունների ձևավորման համար:

- ✓ Մանկավարժա-հոգեբանական առարկայախումբը համապատասխանում է մանկավարժության և հոգեբանության արդի նվաճումներին և կարող է ապահովել մասնագիտական գործունեության մեջ կիրառվող հմտություններ:
- ✓ Մասնագիտական խմբի առարկաները հնարավորություն են տալիս լուծելու տեսական և գործնական բնույթի խնդիրներ և նպաստում են մասնագիտության ոլորտում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

2.8. ԿԾ-ը նախատեսում է ուսումնառության և գիտահետազոտության արդյունավետ զուգակցում:

2.9. ԿԾ-ն ամբողջությամբ կատարած առարկայական բոլոր մոդուլները յուրացրած ուսանողները ամփոփիչ ատեստավորվում են որակավորման քննությունների հանձնմամբ և/կամ ավարտական աշխատանքի պաշտպանությամբ:

ՉԱՓԱՆԻՇ 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

3.1. Ուսանողները ունեն բազային գիտելիքներ և նախապատրաստված են կրթական ծրագրի յուրացման համար:

3.2. Ուսանողները յուրացնում են ծրագրի բոլոր առարկայախմբերի դասընթացները:

3.3. Ուսումնական գործընթացը, դասավանդման և ուսուցման կիրառվող մեթոդները ապահովում են ուսանողների համար հասանելի կրթական արդյունքներ:

3.4. Կիրառվում է ԿԾ-ի իրականացման գործընթացի գնահատման ամբողջական մեխանիզմ:

3.5. ԿԾ-ը ունի հետադարձ կապ ապահովող մոնիթորինգային մեխանիզմներ, որոնք միտված են ծրագրի շարունակականությանը և բարելավմանը:

3.6. Ուսանողների հետազոտական աշխատանքների համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս կրթությունը արդյունավետորեն զուգակցել գիտահետազոտության հետ:

3.7. Ուսանողների համար հնարավորություններ են ստեղծված ԿԾ-ով նախատեսված պրակտիկաները լաբորատորիաներում, կրթական հաստատություններում և արտադրական ձեռնարկություններում անցկացնելու համար:

3.8. ԿԾ-ի շրջանակներում նախադրյալներ են ամրագրված և հնարավորություններ են նախատեսված ուսանողների ակադեմիական շարժունության համար:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

4.1. ՄԿԾ-ը իրականացնող պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրված է ծրագրի ոլորտի մասնագետներով: ԿԾ-ը նպաստում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին:

4.2. Դասախոսները ունեն համապատասխան որակավորման մակարդակ, բազային կրթություն և պարբերաբար բարձրացնում են իրենց որակավորումը լրացուցիչ կրթության և վերապատրաստումների միջոցով:

4.3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է ամբողջական ԿԾ-ի իրականացման, հետադարձ կապի ապահովման և բարելավման աշխատանքներին:

4.4. Դասախոսները հասկանում և կարողանում են գնահատել իրենց կողմից դասավանդվող առարկաների դերն ու նշանակությունը կրթական ծրագրում, մասնագետի ձևավորման գործում և կապը այլ առարկաների հետ:

4.5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է մասնագիտական ծրագրերի և դրամաշնորհների իրականացման գործընթացներին:

4.6. ԿԾ-ը իրականացնող պրոֆեսորադասախոսական անձնակազմի առնվազն 50%-ը գիտությունների դոկտորներ կամ թեկնածուներ են:

4.7. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը ունի փորձառություն մասնագիտական ոլորտում և մասնակցում է գիտահետազոտական նախագծերում:

4.8. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը ակտիվ մասնակցություն ունի ուսումնամեթոդական, գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներում (գիտական կոնֆերանսների զեկուցումներ, հոդվածների հրապարակումներ)՝ առնվազն վերջին մեկ տարվա կտրվածքով:

4.9. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությունը չի գերազանցում 40%-ը:

ՉԱՓԱՆԻՇ 5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԿԾ-ը ուսանողներին ապահովում է կրթական արդյունքներով, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության համար, մասնավորապես, ուսանողը.

5.1 Գիտակցում է գիտելիքի անհրաժեշտությունը և կարող է սովորել ու բարձրացնել որակավորումը մասնագիտական գործունեության ողջ ընթացքում:

5.2.Ցուցաբերում է հիմնարար գիտելիքներ և հմտություններ, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում:

5.3.Կիրառում է ստացած գիտելիքները իր առջև դրված խնդիրների ձևակերպման և լուծման համար՝ համապատասխան մեթոդների գործադրմամբ:

5.4.Իրազեկ է մասնագիտական գործունեության ոլորտի բարեփոխումներին:

5.5.Տիրապետում է համընդհանուր գիտելիքների և կարողանում է ընտրել ու օգտագործել մասնագիտությանն առնչվող վերլուծական և համադրական մեթոդներ:

5.6.Կարողանում է հայթայթել անհրաժեշտ գրականություն, տվյալների բազա և տեղեկատվական այլ աղբյուրներ:

5.7.Կարողանում է ընտրել համապատասխան նյութեր ու սարքավորումներ և պլանավորել, անցկացնել լաբորատոր ուսումնական և հետազոտական փորձեր, մեկնաբանել արդյունքները, հանգել եզրակացությունների:

5.8.Կարողանում է համադրել տեսությունը, պրակտիկան և մեթոդները մասնագիտական նյութի վերլուծության ընթացքում:

5.9.Արդյունավետ աշխատել ինչպես ինքնուրույն, այնպես էլ խմբի մեջ:

5.10.Բավարար մակարդակով տիրապետում է օտար լեզուների, որոնք հնարավորություն կտան աշխատելու միջազգային միջավայրում՝ հասկանալու մշակութային, լեզվական և սոցիալ-քաղաքական տարբերություններն ու առանձնահատկությունները:

5.11.Հետևում է մասնագիտական էթիկիայի կանոններին ու նորմերին:

ՉԱՓԱՆԻՇ 6. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

6.1. ՄԿԾ-ն բուհի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս է:

6.2. Նյութական ապահովվածությունը լիցենզավորված է ԿԾ-ի չափանիշերի սահմաններում:

6.3. Լսարանները, լաբորատորիաները և նրանց հագեցվածությունը ժամանակակից են և համապատասխանում են ԿԾ-ինպատակներին:

6.4. Ուսանողները ունեն բավարար հնարավորություններ ինքնակրթվելու և հետազոտական աշխատանք կատարելու համար:

6.4. Բուհում անընդհատ համալրվում, կատարելագործվում և ընդլայնվում է ԿԾ-երի նյութատեխնիկական բազան:

ՉԱՓԱՆԻՇ 7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

7.1. Տեղեկատվական ապահովվածությունը համապատասխանում է կրթական ծրագրի նպատակներին:

7.2. Բուհը ունի ԿԾ-ին համապատասխանող մասնագիտական գրադարան և կաբինետներ:

7.3. ԿԾ-ը ուսումնառող ուսանողների և դասավանդող դասախոսների համար բուհը ապահովում է համակարգչային լսարաններ՝ համացանցի և ներքին ցանցի առկայությամբ:

7.4. Բուհում ուսանողների և դասախոսական կազմի համար ստեղծված են տեղեկատվական ռեսուրսներից ազատ օգտվելու պայմաններ և հնարավորություն:

7.5. Բուհը անընդհատ վերազինում, կատարելագործում և ընդլայնում է իր տեղեկատվական բազան:

Հավելված 2

ՄԿԾ-Ի ԳԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

I	**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ** *Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:*	
1.1.	ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:	
1.2.	ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս:	
1.3.	ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների:	
1.4.	ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ–ին, մասնագիտության կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիչին:	
1.5.	ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված և համահունչ է նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրերին, նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը, միջազգայնացմանը:	
1.6.	ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:	
1.7.	Առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:	
II.	**ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ** *ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:*	
2.1	ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:	

2.2.	ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը:	
2.3.	ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին:	
2.4.	Հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:	
III.	ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ *ՄԿԾ–ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:*	
3.1.	ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար:	
3.2.	ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները	
3.3.	Առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմները:	
IV.	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ *ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:*	
4.1.	ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, .որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին:	
4.2.	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ:	
4.3.	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ:	
4.4.	ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները:	

4.5.	ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:	
V.	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ *ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:*	
5.1.	ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում մուհ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:	
5.2.	ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:	
5.3.	ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:	
5.4.	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:	
VI.	ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ *ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:*	
6.1.	ՄԿԾ–ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:	
6.2.	Ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն:	
6.3.	ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:	
VII.	ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ *ՄԿԾ –ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:*	
7.1.	Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակական կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև՝ իր գործունեությունը գնահատելու համար:	
7.2.	ՄԿԾ–ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ	

	քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր):	
7.3.	ՄԿԾ–ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար:	
7.4.	ՄԿԾ–ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում:	
7.5.	ՄԿԾ–ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:	

Հավելված 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Համալսարանի ռեկտոր_____Գ.Խաչատրյան

_____201_ թ.

ՄԿԾ-ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՇՐԱԳԻՐ

Ստուգման օբյեկտը		Ժամանակահատվածը Սկիզբը/ավարտը	պատասխանատու
ստորաբաժանում	գործողությունները		
ՈԱԿ	Կրթական ծրագրի աուդիտի ընթացակարգի մշակում		
Ֆիզմաթ ֆակուլտետ, ԻՏՄՄ ամբիոն	Կրթական ծրագրի աուդիտին վերաբերվող փաստաթղթերի ուսումնասիրություն		
Ներքին և արտաքին շահակիցներ	Հարցումների անցկացում		
ՈԱԿ	Հանդիպումներ, քննարկումներ շահակիցների հետ		
ՈԱԿ	Տվյալների վերլուծություն, արդյունքների համատեղ քննարկում		

ՈԱԿ	ԿԾ-ի մշակման ռազմավարության և կառուցվածքի համեմատական վերլուծություն բենչմարկինգի հիման վրա		
ՈԱԿ	Աուդիտի խմբի անդամների կողմից հաշվետվությունների ներկայացում		
ՈԱԿ	Արդյունքների ամփոփում և առաջարկությունների ձևակերպում		
ՈԱԿ	Աուդիտի արդյունքների վերաբերյալ զեկույցի պատրաստում և ներկայացում համապատասխան բաժիններ		
ՈԱԿ	Զեկույցի հստակեցում և ներկայացում համալսարանի ռեկտորին		

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

Որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝ _____

Գործընթացի պատասխանատու՝ _____

Ստորաբաժանման պատասխանատու՝ _____

Հավելված 4

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Համալսարանի ռեկտոր_____Գ.Խաչատրյան

_____201_թ.

ՄԿԾ-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՊԼԱՆ

1.Աուդիտի անցկացման հիմքեր_____

Ծրագիր, հրաման

2.Աուդիտի տեսակը (պլանային, ոչ պլանային)

3. Աուդիտի խմբի ղեկավարը_____

ԱԱՀ

Աուդիտի նպատակը.

- ☐ ՄԿԾ-ի նպատակների, բովանդակության և կառուցվածքի, համապատասխանության գնահատում համալսարանի ռազմավարական նպատակներին, առաքելությանը և կրթական ծրագրերի կազմման ու ներդրման ռազմավարությանը:
- ☐ Դասավանդման և ուսումնառության, ԿԾ-ի իրականացման որակի ապահովման մեխանիզմների ու գործընթացների ուսումնասիրություն, փորձաքննություն, արդյունավետության գնահատում:
- ☐ Շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության որակի ուսումնասիրություն և գնահատում:
- ☐ Շրջանավարտների որակավորման և մասնագիտական պատրաստվածության մակարդակից գործատուների բավարարվածության աստիճանի գնահատում:
- ☐ Մասնագիտության ոլորտում ռիսկերի, սպառնալիքների բացահայտման և հաշվառման մեխանիզմների, կիրառվող գործիքների ուսումնասիրություն:

Աուդիտի չափանիշերը	Աուդիտի ծավալը		Աուդիտորներ	Ստուգվող ստորաբաժանումների ներկայացուցիչներ
	Աուդիտի ոլորտը (գործունեությունը, գործընթացը, ստորաբաժանումը)	Աուդիտի անցկացման ժամանակա ցույցը		
Չափանիշ 1.				

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ				
Չափանիշ 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ				
Չափանիշ 3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ				
Չափանիշ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ				
Չափանիշ 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ				
Չափանիշ 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ				
Չափանիշ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ				

Հավելված 5

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__

	Աուդիտի N _____ Էջ _____
Ստորաբաժանում	Աուդիտորական խմբի ղեկավար՝ (ԱԱՀ)
Աուդիտոր՝ _____ (անուն,ազգանուն,հայրանուն)	Ստորաբաժանման ղեկավար (ԱԱՀ)
Տվյալներ անհամապատասխանության վերաբերյալ	

Չափանիշի բնութագիրը	
Անհամապատասխանության հակիրճ նկարագիրը Աուդիտոր_____	
Անհամապատասխանությունների վերացման պլանավորվող գործողությունները	Նշում իրականացման վերաբերյալ
Աուդիտորական խմբի կարծիքը անհամապատասխանության վերաբերյալ	
Անհամապատասխանության պատճառը	
Անհամապատասխանությունը հիմնավորող օբյեկտիվ տվյալներ Աուդիտոր՝ _____ 20..թ.	
Նպատակահարմա՞ր են շտկողական /կանխարգելիչ գործողությունները	
☐ ☐ Այո Ոչ Ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ԱԱԱ) ստորագրություն << _____>>_____ 20..թ.	
Շտկողական /կանխարգելիչ գործողությունը իրականացված է Ստորաբաժանման ղեկավար՝ _____ << _____>>_____ 20..թ.	
Շտկողական /կանխարգելիչ գործողության իրականացումը Բավարար_____ Անբավարար_____ Աուդիտոր ՝ _____ 20..թ.	

Հավելված 6

ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Զև - 1 *(լրացվում և ստորագրվում է հանձնախմբի յուրաքանչյուր անդամի կողմից)*

ԿԾ _____

Ստորաբաժանում՝

_____

Փորձագետ՝

_____

Լրացման ամսաթիվ

_____

ԿԾ-ի աուդիտի չափանիշերը	գնահատում
Չափանիշ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ	
Չափանիշ 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ	
Չափանիշ 3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ	
Չափանիշ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	
Չափանիշ 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	
Չափանիշ 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	
Չափանիշ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	

Գնահատման համակարգը

Չափանիշը իրականացված է լրիվ «+»

Կան հակասական հարցեր

Մասնագիտական ծրագիրը ունի թույլ կողմեր «-1»

Մասնագիտական ծրագիրը ունի թերություններ «-2»

Հավելված 7

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ձև-2

(լրացվում է խմբի յուրաքանչյուր անդամի կողմից)

ՄԿԾ _____

Աուդիտի խմբի անդամ՝

_____

(ԱԱԱ)

Լրացման ամսաթիվը

_____

Ըստ առարկաների խմբերի

Առարկաների խումբ	Ծավալը, ECTS[1] կրեդիտ			
	Ինքնավերլուծության նյութի հիման վրա	Այցի արդյունքների հիման վրա	Մինիմումը ըստ ՎՊՁ-ի կրթական ծրագրի ռազմավարության	
			Բակալավրի ծրագիր	Մագիստրատուրայի ծրագիր
Բնագիտական և մաթեմատիկական առարկաներ				
Ընդհանուր մասնագիտական առարկաներ				
Հատուկ մասնագիտական առարկաներ				
Հումանիտար առարկաներ				
Սոցիալտնտեսագիտական առարկաներ				
Մանկավարժական առարկաներ				
Հոգեբանական առարկաներ				

_____

Այլ առարկաներ				
Ծրագրի ընդհանուր ծավալը				

Հավելված 8

ԿՐԹԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ձև-3

(լրացվում և ստորագրվում է աուդիտի խմբի անդամների կողմից)

ՄԿԾ _____

Ներկայացնել կրթական ծրագրով ուսուցանվող 2<ուժեղ> և 2 <թույլ> ուսանողների փաստաթղթերը

Առարկաների ցանկը	Առարկաների Միջին միավորը					
	«Ուժեղ»		«Միջին»		«թույլ»	
Միջին միավոր						
Բնագիտական և մաթեմատիկական առարկաներ						
Ընդհանուր մասնագիտական առարկաներ						
Հատուկ մասնագիտական առարկաներ						
Հումանիտար և սոցիալտնտեսական առարկաներ						
Այլ առարկաներ						

Աուդիտորական խմբի ղեկավար՝ _____ ԱԱՀ

Աուդիտի խմբի անդամներ՝ _____ ԱԱՀ

_____ ԱԱՀ

_____ ԱԱՀ

Ամսաթիվ՝ _____

Հավելված 9

ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹ

(լրացվում և ստորագրվում է աուդիտի խմբի յուրաքանչյուր անդամի կողմից)

Ձև - 4

Կազմակերպություն՝

_____

Ծրագիր՝

_____

Փորձագետ՝

_____

(ԱԱՀ)

Լրացման
ամսաթիվ

_____

Օգտագործեք համապատասխան սյունակում ուղեցույցի հետևյալ նշանակումները

« + » - «չափանիշի պահանջները բավարված են լրիվ»

« 0 » - «հակասական ցուցանիշ»

«-1 » - «թույլ կողմ»

«-2 » - «բացակայություն»

Հավելված 10

ԿԾ-Ի ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ձև-5

(լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի կողմից)

ՄԿԾ՝ _____

Ստորաբաժանում՝ _____

	Անվանում	Միավոր (1-5)
1.	Ծրագրի նպատակը	
2.	Սպառողներ	
3.	Գործընթացներ	
4.	Կրթական արդյունքների գնահատում	
5.	Կրթական արդյունքները	
6.	Որակի կառավարման համակարգ	

Աուդիտորական խմբի նախագահ՝ _____ Ա.Ա.Հ

Փորձագետներ՝ _____ Ա.Ա.Հ

_____ Ա.Ա.Հ

«___»_____

Հավելված 11

ԳՈՐԾԱՏՈՒԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱԹԵՐԹ

Ձև-6

(լրացվում և ստորագրվում է միայն գործատուների կողմից)

ՄԿԾ՝ _____

ՓՈՐՁԱԳԵՏ՝ _____

(Ա.Ա.Հ.)201_թ.

Գնահատման սյունակում օգտագործեք հետևյալ նիշերը.

« + » - *«չափանիշի պահանջները բավարված են լրիվ»*

« 0 » - *«հակասական ցուցանիշ»*

«-1 » - *«թույլ կողմ»*

«-2 » - *«բացակայություն»*

ՉԱՓՈՐՈՇՉԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	Գնահատական
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ	
ԿԾ-ի նպատակները համապատասխանում են գործատուների պահանջներին:	
ԿԾ-ի նպատակները հրապարակված են և հասանելի բոլոր շահագրգիռ կողմերին:	
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	

ՉԱՓՈՐՈՇՉԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	Գնահատական
Կրթական ծրագրով նախատեսված են և անց են կացվում պրակտիկաներ գիտարտադրական լաբորատորիաներում և հիմնարկ ձեռնարկություններում:	
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Պրոֆեսորադասախոսական անձնակազմը կրթական ծրագրի շրջանակում ներկայացված է պատրաստված և որակյալ մասնագետներով:	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	
ԿԾ-ն ուսանողներին ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով և փորձով:	
ԿԾ-ը հնարավորություն է ստեղծում հասնելու ուսանողների հետագա աշխատանքի համար անհրաժեշտ ուսումնառության արդյունքների:	
ՈՒՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	
ԿԾ-ի իրականացման պայմանները՝ լսարանները, լաբորատորիաները և կահավորումը համապատասխանում են ԿԾ-ի նպատակներին:	
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ	
Բուհում կամ ստորաբաժանումներում առկա է ԿԾ-ի շրջանավարտների համար աշխատատեղերի ուսումնասիրման, պահանջարկի և զբաղվածության կարիերայի աջակցման կենտրոն:	
Կարիերայի աջակցման կենտրոնի միջոցով ստացված տվյալները հետադարձ կապով հաշվի են առնվում և նպաստում ԿԾ-ի կատարելագործմանը:	
Գործատուները և շրջանավարտները հաստատում են կրթական ծրագրի նպատակները:	
Շրջանավարտները աշխատում են ստացած մասնագիտությամբ:	

Հավելված 12

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձև-7

(լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից)

ՄԿԾ

_____

Օգտագործեք համապատասխան սյունակում ուղեցույցի հետևյալ նշանակումները

« + » - *«չափանիշի պահանջները բավարված են լրիվ»*

«-1 » - *«թույլ կողմ»*

«-2 » - *«բացակայություն»*

I.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ *(այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև՝ մուտ-ի առաքելությանը:*	
1.1	ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:	
1.2	ՄԿԾ-ն հանդիսանում է մուտ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս:	
1.3	ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների:	
1.4	ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ–ին, մասնագիտության կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիչին:	
1.5	ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրերին և նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը:	
1.6	ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:	

1.7	Առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:	
II.	ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ *ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:*	
2.1	ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:	
2.2	ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը:	
2.3	ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին:	
2.4	Հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:	
III.	ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ *ՄԿԾ–ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:*	
3.1	ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար:	
3.2	ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները	
3.3	Առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմները:	
IV.	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ *ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:*	

4.1	ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին:	
4.2	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ:	
4.3	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ	
4.4	ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները	
4.5	ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:	
V.	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ *ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:*	
5.1	ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում մուտ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:	
5.2	ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:	
5.3	ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:	
5.4	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:	
VI.	ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ *ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:*	
6.1	ՄԿԾ–ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:	

6.2	Ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն:	
6.3	ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:	
VII.	ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ *ՄԿԾ -ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:*	
7.1	Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակական կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար:	
7.2	ՄԿԾ–ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր):	
7.3	ՄԿԾ–ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար:	
7.4	ՄԿԾ–ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում:	
7.5	ՄԿԾ–ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:	

Փորձագիտական խմբի նախագահ՝ _____ Ա.Ա.Հ.

Փորձագետ -աուդիտորներ ՝ _____ Ա.Ա.Հ.

_____ Ա.Ա.Հ.

_____ Ա.Ա.Հ.

«___»_____ թ.

Հավելված 13

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աուդիտի հաշվետվողականության ձևերին են վերաբերում.

ա) Ձ-1 – ինքնավերլուծության արդյունքների հիման վրա տրված նախնական գնահատականը,

բ) Ձ-2 – ուսումնական պլանի վերլուծությունը,

գ) Ձ -3 – կրթական փաստաթղթերի վերլուծությունը,

դ) Ձ -4 – փորձագետի աշխատանքային թերթիկը,

ե) Ձ -5 – կրթական գործընթացում որակի կառավարման գործընթացի իրականացման աստիճանը,

զ) Ձ -6 – գործատուի աշխատանքային թերթիկը կրթական ծրագրի վերաբերյալ,

է) Ձ -7 – ծրագրի գնահատման ընդհանրական ձևը:

Ուշադրություն

Ձ -3, Ձ -5 և Ձ -7 ձևաթղթերը լրացվում են մեկ օրինակով քննարկման արդյունքում և ստորագրվում են խմբի բոլոր անդամների կողմից:

Ձ -6 ձևը լրացվում է միայն գործատուի կողմից:

Ձ -1, Ձ -2 և Ձ-4 ձևաթղթերը լրացվում են աշխատախմբի բոլոր մասնակիցների կողմից՝ ներառյալ ղեկավարին: